Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 849 - Ա
որոշման

ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏԱՔ ՁՄԵՌ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Նոյեմբերյան և Բերդ համայնքներում ապաստանած 270 ընտանիքների տրամադրել վառելափայտ, որը հնարավորություն կտա այդ ընտանիքներին ջեռուցել իրենց կացարանները և հարմարավետ պայմաններում անցկացնել ձմեռը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը՝ ի դեմս Գերմանիայի արտաքին գործերի դաշնային գերատեսչության
4.	Ծրագիրը կատարողը	Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղ (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան 0010, Խորենացու փողոց 22, ՀՎՀՀ՝ 02517115)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, Տավուշի մարզի Իջևան, Նոյեմբերյան և Բերդ համայնքներ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	81,200,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Նոյեմբերյան և Բերդ համայնքներում ապաստանած 270 ընտանիքներ

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի դեկտեմբերի 9-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Լեռնային Ղարաբաղից տեղահանված և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Նոյեմբերյան և Բերդ համայնքներում ապաստանած 270 ընտանիքներին տրամադրել 2,800 խորանարդ մետր վառելափայտ՝ 81,200,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի դեկտեմբերի 9-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	2,800 խորանարդ մետր վառելափայտի ձեռքբերում՝ 81,200,000 դրամ առանց ավելացված արժեքի հարկի
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Միասնական սոցիալական ծառայության համապատասխան տարածքային կենտրոնների, Տավուշի մարզպետի աշխատակազմի, Իջևան, Նոյեմբերյան և Բերդ համայնքների համայնքապետարանների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Վերահսկողությունը կատարվելու է Հայ օգնության ֆոնդի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով բարեգործության ոլորտը համակարգող լիազորված մարմնին կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

28.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ